



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ**  
**Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**«ՌՌԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԻ ԹԻՎ 6-781 ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 19-ՐԴ ԳԼԽԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԴՐԱ ՀԵՏ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՌՈՒՄՈՎ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ՝ ՀՀ ԱԶ-ԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ՎԵՐՏԱՌՈՒԹՅԱՄԲ Պ-667-19.06.2020-ՊԻ-010/2ամբ. ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Ռոբերտ Քոչարյանի թիվ 6-781 դիմումի հիման վրա՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 19-րդ գլխի, ինչպես նաև դրա հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «ՀՀ Սահմանադրության փոփոխություններ» վերտառությամբ Պ-667-19.06.2020-ՊԻ-010/2ամբ. նորմատիվ իրավական ակտի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Ձ Ե Ց.**

1. Ռոբերտ Քոչարյանի թիվ 6-781 դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2020 թվականի հունիսի 24-ին:

Դիմողը Սահմանադրական դատարան ներկայացրած իր դիմումում խնդրել է. «....առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 168-րդ հոդվածով և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 25, 27, 28, 69 հոդվածներով, որոշել «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 19-րդ գլխի, ինչպես նաև դրա հետ

համակարգային առումով փոխկապակցված ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «ՀՀ Սահմանադրության փոփոխություններ» վերտառությամբ Պ-667-19.06.2020-ՊԻ-010/2ամբ. նորմատիվ իրավական ակտը, այնքանով, որքանով չեն նախատեսում անձի սահմանադրական արդարադատության, իրավունքի պաշտպանության և որոշակիության երաշխիքներ՝ նաև հաշվի առնելով իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությունը»:

2. Դիմողը հայտնում է, որ 2019 թվականի հունիսի 21-ին Սահմանադրական դատարանն իր ՍԴԱՌ-60 և ՍԴԱՌ-61 աշխատակարգային որոշումներով վարույթ է ընդունել իր՝ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի՝ Սահմանադրության 72 և 73-րդ հոդվածներին համապատասխանության հարցը որոշելու և նույն դրույթի՝ Սահմանադրության 78 և 79-րդ հոդվածներին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ դիմումները: Ընդ որում, 2019 թվականի հուլիսի 18-ի ՍԴԱՌ-81 աշխատակարգային որոշմամբ նշված դիմումների հիման վրա գործերը կասեցվել են և խորհրդատվական կարծիքներ ստանալու նպատակով դիմումներ են ներկայացվել Մարդու իրավունքների եվրոպական դատարան և Վենետիկի հանձնաժողով:

2020 թվականի հունիսի 22-ին ՀՀ Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանում քննարկվել և ամբողջությամբ ընդունվել է ՀՀ Սահմանադրության 213-րդ հոդվածում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը:

Դիմողի կարծիքով՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 19-րդ գլուխը փաստացի վերաբերում է նաև իր օրինական շահերին այնքանով, որքանով Սահմանադրական դատարանում մեկ տարուց ավելի է, ինչ վարույթ է ընդունվել իր դիմումը, և այդ վարույթի գործով զեկուցող են Սահմանադրական դատարանի 7 դատավորները: Այդ դատավորների շարքում են նաև նրանք, ում նկատմամբ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 19-րդ գլխի մեկնաբանմամբ և առանց Սահմանադրական դատարանի դիրքորոշման բացահայտման ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «ՀՀ Սահմանադրության փոփոխություններ» վերտառությամբ Պ-667-19.06.2020-ՊԻ-010/2ամբ. նորմատիվ իրավական ակտով իրացվում է ենթադրյալ Սահմանադրական դատարանի օրինա-

կան կազմի լիազորությունների դադարեցման գործիքակազմ: Դիմողի պնդմամբ իր նկատմամբ կիրառվել են «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 19-րդ գլխի կարգավորումները և համակարգային առումով վերջինիս փոխկապակցված՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «ՀՀ Սահմանադրության փոփոխություններ» վերտառությամբ Պ-667-19.06.2020-ՊԻ-010/2ամբ. նորմատիվ իրավական ակտն այն պատճառաբանությամբ, որ դրանք չեն կարող բողոքարկվել ներպետական պաշտպանության միջոցներով, քանի որ քննության առարկա կարող են հանդիսանալ բացառապես Սահմանադրական դատարանում: Այդ տեսանկյունից, դիմողի կարծիքով, անհատական դիմումը ներկայացվում է ներպետական դատական պաշտպանության հնարավոր բոլոր միջոցների փաստացի սպառման (բացակայության) պայմաններում:

Դիմողը գտնում է՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 19-րդ գլխի այնքանով, որքանով չի ապահովում և գործնականում չի ապահովել անձի սահմանադրական արդարադատության չմիջամտման երաշխիքներ, չի համապատասխանում Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներին:

Դիմողը գտնում է նաև, որ «ՀՀ Սահմանադրության փոփոխություններ» վերտառությամբ Պ-667-19.06.2020-ՊԻ-010/2ամբ. նորմատիվ իրավական ակտի և իրավակիրառ պրակտիկայում վերջինիս վերաբերյալ ձևավորված մոտեցումներն այնքանով, որքանով չեն նախատեսում առանձնահատկություններ՝ դեռևս Սահմանադրական դատարանում քննվող գործերով զեկուցողի կարգավիճակ ունեցող դատավորների մասով, հակասում են Սահմանադրության 61, 63 և 79-րդ հոդվածներին:

Արդյունքում, դիմողը եզրակացնում է, որ իրականացված ակնհայտ ոչ իրավաչափ օրենսդրական գործողությունների արդյունքում կոնկրետ միջամտություն է տեղի ունեցել իր օրինական շահերին վերաբերող, օրենքի հիման վրա ձևավորված Սահմանադրական դատարանի կազմի և սահմանադրական արդարադատության մատչելիության նկատմամբ՝ փաստացի արգելափակելով անհատական սահմանադրական գանգատի էությունը:

3. Ելնելով դիմումի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանը գտնում է.

Ա. Ռոբերտ Քոչարյանի թիվ 6-781 անհատական դիմումով գործի քննությունը՝ **«Սահմանադրության փոփոխությունների** մասով, Սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

Դիմողը 2020 թվականի հունիսի 24-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումով վիճարկում է Սահմանադրության՝ Ազգային ժողովի կողմից 2020 թվականի հունիսի 22-ին ընդունված փոփոխությունները, որոնք ուժի մեջ են մտել 2020 թվականի հունիսի 26-ին:

Այլ կերպ, դիմողը վիճարկում է Սահմանադրության՝ Ազգային ժողովի կողմից ընդունված փոփոխությունները: Մինչդեռ, Սահմանադրությամբ Սահմանադրական դատարանին վերապահված լիազորությունները չեն ներառում Սահմանադրության ընդունված փոփոխությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելը, ուստի Սահմանադրության ընդունված փոփոխությունները ենթակա չեն Սահմանադրական դատարանին:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե դիմումում առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին: Քանի որ դիմողի կողմից վիճարկվում է Սահմանադրության ընդունված փոփոխությունները, այսինքն՝ դիմումում բարձրացվել է Սահմանադրական դատարանին ոչ ենթակա հարց, ուստի սույն անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը ենթակա է մերժման:

Բ. Ռոբերտ Քոչարյանի թիվ 6-781 անհատական դիմումով գործի քննությունը՝ **«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 19-րդ գլխի** մասով, Սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով անհատական դիմում կարող է ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝ ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը, բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները, և վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը: Այսպիսով, անհատական դիմումին ներկայացվող պահանջներից մեկը դիմողի նկատմամբ դատարանի կողմից վիճարկվող դրույթի կիրառումն է:

Սահմանադրական դատարանն իր՝ 17.03.2009թ. ՍԴԱՌ-21 որոշմամբ արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որևէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ»:

Սահմանադրական դատարանը դիմումի ուսումնասիրության արդյունքում փաստում է, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 19-րդ գլխի նորմերը որևէ վերջնական դատական ակտով դիմողի նկատմամբ չեն կիրառվել, **ուստի դիմողն իրավասու չէ տվյալ հարցով դիմելու Սահմանադրական դատարան:**

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերը՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

«Ռոբերտ Քոչարյանի թիվ 6-781 դիմումի հիման վրա՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 19-րդ գլխի, ինչպես նաև դրա հետ

համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «ՀՀ Սահմանադրության փոփոխություններ» վերտառությամբ Պ-667-19.06.2020-ՊԻ-010/2ամբ. նորմատիվ իրավական ակտի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՆԱԽԱԳԱՀ**



**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

30 նոյեմբերի 2020 թվականի  
ՍԴԱՈ-223